ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

0095, ՀՀ, Երևան, Մ.Բաղրամյան պող. 19, +374 11 51 32 05,

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության Սահմանադրական օրենքի 96-րդ հոդվածը, կից ներկայացնում ենք «Հայաստան» և «Պատիվ ունեմ» խմբակցությունների որոշումները՝ «Ազգային ժողովի պատգամավոր Անդրանիկ Քոչարյանի վարքագծի վերաբերյալ պատգամավորական էթիկայի հարցերով հանձնաժողով ստեղծելու մասին» Ազգային ժողովի որոշման նախագիծն (Կոդ՝ Խ-1049-10.04.2025-ՊԻ-012/0) (հեղինակ՝ «Հայաստան» խմբակցություն և «Պատիվ ունեմ» խմբակցություն) արտահերթ հարց համարելու մասին՝ այն սահմանված կարգով Ազգային ժողովի 2025թ. մայիսի 6-ին գումարվող հերթական նիստերի երեքշաբթի օրվա երկրորդ հիմնական նիստում քննարկում կազմակերպելու նպատակով:

Առդիր 2 էջ:

«ՊԱՏԻՎ ՈՒՆԵՄ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

Տ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

«ՀԱՅԱՍՏԱՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

Ա. ՄԻՆԱՍՅԱՆ

27.04.2025թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ
0095, ՀՀ, Երևան, Մ.Բաղրամյան պող. 19, +374 11 51 32 05

ՈՐՈՇՈՒՄ

*(Քաղվածք «Պատիվ ունեմ» խմբակցության նիստի)*

# «ՊԱՏԻՎ ՈՒՆԵՄ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ «ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐ ԱՆԴՐԱՆԻԿ ՔՈՉԱՐՅԱՆԻ ՎԱՐՔԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԷԹԻԿԱՅԻ ՀԱՐՑԵՐՈՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ԱՐՏԱՀԵՐԹ ՀԱՐՑ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքի 38-րդ հոդվածի 3-րդ մասի 11-րդ կետը, 40-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետը, 96-րդ հոդվածը, Ազգային ժողովի «Պատիվ ունեմ» խմբակցության կանոնադրությունը,

Կարևորելով «Ազգային ժողովի պատգամավոր Անդրանիկ Քոչարյանի վարքագծի վերաբերյալ պատգամավորական էթիկայի հարցերով հանձնաժողով ստեղծելու մասին» Ազգային ժողովի որոշման նախագիծը (Խ-1049-10.04.2025-ՊԻ-012/0) (հեղինակ՝ «Հայաստան» խմբակցություն և «Պատիվ ունեմ» խմբակցություն)։

Նկատի առնելով այն, որ նշված՝ «Ազգային ժողովի պատգամավոր Անդրանիկ Քոչարյանի վարքագծի վերաբերյալ պատգամավորական էթիկայի հարցերով հանձնաժողով ստեղծելու մասին» Ազգային ժողովի որոշման նախագծի վերաբերյալ գլխադասային հանձնաժողովը՝ Ազգային ժողովի Պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովը 25.04.2025թ. նիստում տվել է բացասական եզրակացություն։

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի «ՊԱՏԻՎ ՈՒՆԵՄ» խմբակցությունը

ՈՐՈՇԵՑ

1. Համաձայնություն տալ և անհրաժեշտ համարել «Ազգային ժողովի պատգամավոր Անդրանիկ Քոչարյանի վարքագծի վերաբերյալ պատգամավորական էթիկայի հարցերով հանձնաժողով ստեղծելու մասին» Ազգային ժողովի որոշման նախագծի քննարկումը Ազգային ժողովի նիստում:

2. «Ազգային ժողովի պատգամավոր Անդրանիկ Քոչարյանի վարքագծի վերաբերյալ պատգամավորական էթիկայի հարցերով հանձնաժողով ստեղծելու մասին» Ազգային ժողովի որոշման նախագիծը համարել արտահերթ հարց, որը քննարկման է ենթակա Ազգային ժողովի 2025թ. մայիսի 6-ին գումարվող հերթական նիստերի երեքշաբթի օրվա երկրորդ հիմնական նիստում:

3. Առաջարկել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նախագահին՝ սույն որոշմամբ նախատեսված հարցն ընդգրկել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի հերթական նստաշրջանի օրակարգ և կազմակերպել դրա քննարկումը սույն որոշման 2-րդ կետում նշված նիստում, որպես ընդդիմադիր խմբակցության կողմից արտահերթ համարված հարց:

4. «Ազգային ժողովի պատգամավոր Անդրանիկ Քոչարյանի վարքագծի վերաբերյալ պատգամավորական էթիկայի հարցերով հանձնաժողով ստեղծելու մասին» Ազգային ժողովի որոշման նախագծի հիմնական զեկուցողն է պատգամավոր Թագուհի Թովմասյանը:

«ՊԱՏԻՎ ՈՒՆԵՄ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Տ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

27.04.2025թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ
0095, ՀՀ, Երևան, Մ.Բաղրամյան պող. 19, +374 11 51 32 05

ՈՐՈՇՈՒՄ

*(Քաղվածք «Հայաստան» խմբակցության նիստի)*

«ՀԱՅԱՍՏԱՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ «ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐ ԱՆԴՐԱՆԻԿ ՔՈՉԱՐՅԱՆԻ ՎԱՐՔԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԷԹԻԿԱՅԻ ՀԱՐՑԵՐՈՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾՆ ԱՐՏԱՀԵՐԹ ՀԱՐՑ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքի 38-րդ հոդվածի 3-րդ մասի 11-րդ կետը, 40-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետը, 96-րդ հոդվածը, Ազգային ժողովի «Հայաստան» խմբակցության կանոնադրությունը,

Կարևորելով «Ազգային ժողովի պատգամավոր Անդրանիկ Քոչարյանի վարքագծի վերաբերյալ պատգամավորական էթիկայի հարցերով հանձնաժողով ստեղծելու մասին» Ազգային ժողովի որոշման նախագիծը (Խ-1049-10.04.2025-ՊԻ-012/0) (հեղինակ՝ «Հայաստան» խմբակցություն և «Պատիվ ունեմ» խմբակցություն):

Նկատի առնելով այն, որ նշված՝ «Ազգային ժողովի պատգամավոր Անդրանիկ Քոչարյանի վարքագծի վերաբերյալ պատգամավորական էթիկայի հարցերով հանձնաժողով ստեղծելու մասին» Ազգային ժողովի որոշման նախագծի վերաբերյալ գլխադասային հանձնաժողովը՝ Ազգային ժողովի Պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովը 25.04.2025թ. նիստում տվել է բացասական եզրակացություն:

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի «ՀԱՅԱՍՏԱՆ» խմբակցությունը

ՈՐՈՇԵՑ

1. Համաձայնություն տալ և անհրաժեշտ համարել «Ազգային ժողովի պատգամավոր Անդրանիկ Քոչարյանի վարքագծի վերաբերյալ պատգամավորական էթիկայի հարցերով հանձնաժողով ստեղծելու մասին» Ազգային ժողովի որոշման նախագծի քննարկումը Ազգային ժողովի նիստում:

2. «Ազգային ժողովի պատգամավոր Անդրանիկ Քոչարյանի վարքագծի վերաբերյալ պատգամավորական էթիկայի հարցերով հանձնաժողով ստեղծելու մասին» Ազգային ժողովի որոշման նախագիծը համարել արտահերթ հարց, որը քննարկման է ենթակա Ազգային ժողովի 2025թ. մայիսի 6-ին գումարվող հերթական նիստերի երեքշաբթի օրվա երկրորդ հիմնական նիստում:

3. Առաջարկել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նախագահին՝ սույն որոշմամբ նախատեսված հարցն ընդգրկել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի հերթական նստաշրջանի օրակարգ և կազմակերպել դրա քննարկումը սույն որոշման 2-րդ կետում նշված նիստում, որպես ընդդիմադիր խմբակցության կողմից արտահերթ համարված հարց:

4. «Ազգային ժողովի պատգամավոր Անդրանիկ Քոչարյանի վարքագծի վերաբերյալ պատգամավորական էթիկայի հարցերով հանձնաժողով ստեղծելու մասին» Ազգային ժողովի որոշման նախագծի հիմնական զեկուցողն է պատգամավոր Թագուհի Թովմասյանը:

«ՀԱՅԱՍՏԱՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ Ա. ՄԻՆԱՍՅԱՆ

27.04.2025թ.